

5.8. 2008թ. սեպտեմբեր ամսվա հիդրոոդերևութաբանական վիճակը Հայաստանում

Ըստ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի պետական ծառայության տեղեկատվության, սեպտեմբերին օդի միջին ամսական ջերմաստիճանը տարածաշրջանների մեծ մասում եղել է նորմայի սահմաններում, առանձին վայրերում՝ նորմայից բարձր 1 աստիճանով:

Միջին տասնօրյակային ջերմաստիճանն առաջին և երկրորդ տասնօրյակներում եղել է նորմայից բարձր 1 աստիճանով, երրորդ տասնօրյակում՝ նորմայի սահմաններում:

Միջին առավելագույն ջերմաստիճանը Սյունիքի հովիտներում և Արարատյան դաշտավայրում կազմել է $+25 +29^{\circ}\text{C}$, ՀՀ Տավուշի մարզում և Սյունիքի նախալեռներում՝ $+20 +23^{\circ}\text{C}$, ՀՀ Լոռու մարզում և Լեռնային շրջաններում՝ $+19 +22^{\circ}\text{C}$:

Ամենաբարձր ջերմաստիճանը տարածաշրջանների մեծ մասում դիտվել է սեպտեմբերի 1-4-ին: Արարատյան դաշտավայրում գրանցվել է $+34 +36^{\circ}\text{C}$, Սյունիքի հովիտներում՝ $+30 +33^{\circ}\text{C}$, ՀՀ Տավուշի, Լոռու մարզերում, Սյունիքի նախալեռներում և Լեռնային շրջաններում՝ $+26 +29^{\circ}\text{C}$:

Միջին նվազագույն ջերմաստիճանը Լեռնային շրջաններում և ՀՀ Լոռու մարզում կազմել է $+6 +10^{\circ}\text{C}$ (Աշոցք գյուղում (ՀՀ Շիրակի մարզ)՝ $+4^{\circ}\text{C}$), ՀՀ Տավուշի մարզում և Սյունիքի նախալեռներում՝ $+10 +15^{\circ}\text{C}$, Արարատյան դաշտավայրում և Սյունիքի հովիտներում՝ $+13 +18^{\circ}\text{C}$:

Ամենացածր ջերմաստիճանը դիտվել է սեպտեմբերի 11-13-ին և 29-30-ին: Լեռնային շրջաններում և ՀՀ Լոռու մարզում գրանցվել է $0 +5^{\circ}\text{C}$, ՀՀ Սյունիքի, Տավուշի մարզերում և Արարատյան դաշտավայրում՝ $+8 +13^{\circ}\text{C}$ (ք.Դիլիջանում (ՀՀ Տավուշի մարզ)՝ $+5^{\circ}\text{C}$):

Սեպտեմբեր ամսվա ընթացքում հանրապետության տարածաշրջանների մեծ մասում տեղումների քանակը եղել է նորմայից բարձր: Արարատյան դաշտավայրում և Արագածոտնի նախալեռներում այն կազմել է նորմայի 250-450%-ը (ք.Արարատում (ՀՀ Արարատի մարզ)՝ 110%, ք.Երևանում՝ 560%), Լեռնային շրջաններում՝ 180-240% (Աշոցք գյուղում՝ 84%, Մասրիկ գյուղում (ՀՀ Արարատի մարզ)՝ 66%), ՀՀ Սյունիքի և Լոռու մարզերում՝ 120-170% (ք.Մեղրիում (ՀՀ Սյունիքի մարզ)՝ 216%):

Սեպտեմբերի 9-ին, 11-ին և 27-28-ին տարածաշրջանների մեծ մասում դիտվել է անձրև և ամպրոպ:

Առանձին օրեր Արարատյան դաշտավայրում, 7-10-ին՝ ՀՀ Տավուշի մարզում և ք.Վանաձորում (ՀՀ Լոռու մարզ) դիտվել է քանու ուժգնացում, արագությունը՝ 8-12 մ/վրկ, պոռթկումները՝ 18-24 մ/վրկ: Սեպտեմբերի 8-ին՝ ք.Ապարանում՝ (ՀՀ Արագածոտնի մարզ), 9-ին՝ ք.Վանաձորում և ք.Հրազդանում (ՀՀ Կոտայքի մարզ), 10-ին՝ ք.Դիլիջանում և ք.Ապարանում, 11-ին՝ ք.Հրազդանում, 25-ին՝ ք.Ջերմուկում (ՀՀ Վայոց ձորի մարզ) դիտվել է կարկուտ 5-12 մմ տրամագծով: Սեպտեմբերի 28-ին ք.Արմավիրում (ՀՀ Արմավիրի մարզ) դիտվել է ուժեղ անձրև, ինտենսիվությունը՝ 35 մմ/12 ժ, ք.Աշտարակում (ՀՀ Արագածոտնի մարզ) և Ֆանտան գյուղում (ՀՀ Կոտայքի մարզ)՝ 30 մմ/12 ժ: Սեպտեմբերի 21-ին ք.Տաշիրում (ՀՀ Լոռու մարզ) և 30-ին Ամասիա գյուղում (ՀՀ Շիրակի մարզ) դիտվել է մառախուղ 500 մ տեսանելիությամբ:

Սեպտեմբերին հանրապետության գետերի մեծ մասում միջին ամսական ելքերը կազմել են նորմաների 100-130%-ը, իսկ Արփայի ավազանի գետերում՝ 50-80%:

Սևանա լճի մակարդակը սեպտեմբեր ամսվա ընթացքում իջել է 9 սմ-ով և 2008թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ կազմել 1899.01 մ, որը 2007թ. նույն օրվա համեմատ բարձր է 16 սմ-ով:

Սեպտեմբերին լճից բաց թողնված ջրի քանակը 01.09.2008թ. – 25.09.2008թ. կազմել է 39.466 մլն. խոր. մ: